Արձանագրություն N 2

<<ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/12>>ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

գ.Ախուրյան

<<26>> <<հուլիսի>> 2021թ.

ժամը 11:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. «ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N11 սենյակում:գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:Գնումը հայտարարվել է 3 չափաբաժիններով:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է հինգ հայտ, ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան.

| N | Մասնակցի անունը | Մասնակցի հասցեն | Էլ.փոստ |
|---|---|---|---|
| 1. | <<Շինարար>>ՍՊԸ | Ք.Գյումրի ,Երևանյան խճ.20 | shinarar1996@mail.ru |
| 2 | <<Փարվանա>>ԱԿ | Շիրակի մարզ գ.Ախուրյան | gagikbeybutyan@mail.ru |
| 3 | <<Սիմա Շին>>ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ,Նոր. Ախուրյան,Յու.Ղամբարյան փ.3ա շենք,բն 9 | simshinsim@mail.ru |
| 4 | Ա/Ձ Արտյոմ Սարիբեկյան | Ք.Գյումրի,Բ.Խմելնիցկի-3/2 | Hakobyan-amalyan@mail.ru |
| 5 | «Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ | Ք.Գյումրի,Ախուրյանի խճուղի 2 | ksv-shin@mail.ru |

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/12»ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած բոլոր հայտերը կազմված էին գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված էին բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց հրավերի պահանջներին համապատասխանող մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

**5. Հրավերի պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացրած գնային առաջարկները ՝**

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ / | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Գյումրիի խճուղի թիվ 72 | | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի | | «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան | |

| | | հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի տանիքի նորոգման աշխատանքներ» /I չափաբաժին/ | | Չրաշխինարարների փողոցի թիվ11հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի տանիքի նորոգման աշխատանքներ» /II չափաբաժին/ | | բնակավայրի հանրակացարանային շինության տանիքի նորոգման աշխատանքներ» /III չափաբաժին/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Շինարար>>ՍՊԸ | 7015750 | 8418900 | 13998103 | 16797724 | 4443034 | 5331640 |
| 2 | <<Փարվանա>>ԱԿ | 8309167 | 9971000 | 15366583 | 18439900 | 4794583 | 5753500 |
| 3 | <<Սիմա Շին>>ՍՊԸ | 8011718 | 9614061 | - | - | 4454408 | 5345289 |
| 4 | Ա/Ձ Արտյոմ Սարիբեկյան | 7711740 | 9254088 | 14962393 | 17954872 | 4299547 | 5159456 |
| 5 | «Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ | 8081304 | 9697565 | 15277883 | 18333460 | 4347026 | 5216432 |

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Հայտերի բացման նիստի ժամանակ մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, քանի որ նիստին ներկա էին բոլոր մասնակիցների ներկայացուցիչները, 3 չափաբաժինների համար կայացվող բանակցություններին հրաժարվեցին մանակցել <<Փարվանա>>ԱԿ -ն և <<Սիմա Շին>>ՍՊԸ-ն:Յուրաքանչյուր չափաբաժնի բանակցության համար մասնակիցներին տրվեց տասնհինգ րոպե ժամանակ/երեք քայլ/, , որի արդյունքում.
2. Առաջին չափաբաժին-բոլոր մասնակիցները հրաժարվեցին բանակցել գների նվազեցման շուրջ:
3. Երկրորդ չափաբաժին-բոլոր մասնակիցները հրաժարվեցին բանակցել գների նվազեցման շուրջ:
4. Երրորդ չափաբաժին-մասնակցեց «Կ.Ս.Վ. Շին»ՍՊԸ-ն և նվազեցրեց իր առաջարկած գինը մինչև 5150000 ՀՀ դրամ:

«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչվեց **<u>«Շինարար»ՍՊԸ</u>**-ն

1-ին չափաբաժին-8418900 ՀՀ դրամ, իսկ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրին. համապատասխանաբար Ա/Ձ Արտյոմ Սարիբեկյան, <<Սիմա Շին>>ՍՊԸ, «Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ, <<Փարվանա>>ԱԿ

2-րդ չափաբաժին-16797724 ՀՀ դրամ,իսկ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրին. համապատասխանաբար Ա/Ձ Արտյոմ Սարիբեկյան, «Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ, <<Փարվանա>>ԱԿ:

«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչվեց **«Կ.Ս.Վ Շին»ՍՊԸ** –ն

3-րդ չափաբաժին-5150000 ՀՀ դրամ/նվազեցրած գին/, իսկ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրին. համապատասխանաբար Ա/Ձ Արտյոմ Սարիբեկյան, «Շինարար»ՍՊԸ ,<<Սիմա Շին>>ՍՊԸ, <<Փարվանա>>ԱԿ

1. Գնահատող հանձնաժողովը հայտարարեց ընտրված մասնակիցներին, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

2.Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, հայտերի գրանցամատյանի, հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության, ընտրված մասնակցի հայտով ներկայացրած հավելված 1-ի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով համայնքի բյուջեում առկա է 13057648 /կնքվելիք պայմանագրի գնի 43%-ը/, որի մասով կողմերի միջև կկնքվի պայմանագիր,իսկ մնացած 17% գումարի մասով համաձայնագրի կնքման, միջոցով,40% կառավարության կողմից ներդրվող գումարի առկայության դեպքում լրացուցիչ համաձայնագրի կկնքվի կապալառուի հետ: Պատվիրատուի կողմից պայմանագիր կկնքվի, եթե ընտրված մասնակցի կողմից, կներկայացվեն տուժանքի ձևով որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ լրացուցիչ համաձայնագրի կնքման ժամանակ որակավորման և պայմանագրի ապահովումները կփոխարինվեն նոր ապահովումներով՝երաշխիքով կամ կանխիկ փողով: Ապահովումները Պատվիրատուին պետք է ներկայացվի պայմանագրի կնքման մասին ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Որոշումը ընդունվել է 3 կողմ, 0 դեմ, ձայներով:

...կա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Ռուբիկ Քաբաբյան

Վաղինակ Հովսեփյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան